

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2003թ. հունվարի ՀՆԱ-ի ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2003թ. հունվարին կազմել է 51852.9 մլն. դրամ և դրա աճի տեմպը 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 110.6%` 2002թ. հունվարի 107.5%-ի դիմաց:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում պայմանավորված է հիմնականում 5 բազային ճյուղերի աճով: Ընդհանուր առմամբ, այդ ճյուղերի հաշվին ապահովվել է ավելացված արժեքի արտադրության 113.7% աճ` 2002թ. հունվարի 107.0%-ի դիմաց: Դրա հետ մեկտեղ, ՀՆԱ-ի կառուցվածքում 5 բազային ճյուղերի տեսակարար կշիռը 2002թ. հունվարի համեմատությամբ ավելացել է 2.5 տոկոսային կետով:

ՀՆԱ-ի արտադրությունը տնտեսության հիմնական բազային ճյուղերով

(%-ով)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատվամբ		ՀՆԱ -ի հավելածի կազմը		ՀՆԱ-ի կառուցվածքը ընդամենի նկատմամբ	
	հունվար		հունվար		հունվար	
	2002	2003	2002	2003	2002	2003
<i>ՀՆԱ, հիմնական գներով</i>	106.1	112.4	5.2	10.4	84.1	85.6
<i>այդ թվում</i>						
արդյունաբերություն	107.1	109.9	2.2	3.1	31.0	31.5
գյուղատնտեսություն	105.8	106.0	0.8	0.8	13.2	12.4
շինարարություն	113.2	195.3	0.4	2.9	3.0	5.1
տրանսպորտ և կապ	102.2	120.6	0.1	1.2	6.0	6.7
առևտուր և հանրային սնունդ	108.6	109.8	1.4	1.6	16.2	16.1
Ընդամենը, բազային ճյուղերը	107.0	113.7	4.9	9.5	69.4	71.9
Ընդամենը, այլ ճյուղեր	102.0	105.9	0.3	0.9	14.7	13.7
Ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	115.8	101.2	2.3	0.2	15.9	14.4
ՀՆԱ, շուկայական գներով	107.5	110.6	7.5	10.6	100.0	100.0